նովկայում օթեւանը պատրաստած էր խճուղու վերակացուի կայարանի շինութեան մէջ, որ Սեւանայ լճի ափին է կառուցած։ Ամբողջ շինութիւնը նոյնպէս զարդարուած էր ծաղիկներով. կախած էին բազմագոյն լապտերներ և հրախաղեր էին պատրաստած։ Այդ տեղ Վեհափառին դիմաւորեցին Նոր Պայազիտի հոգեւորականութիւնը և պատուաւոր անձինք, որոնք առաւօտուանից եկած էին Նոր Բայազիտից, որ 30 վերստ հեռու է գտնվում Ելենովկայից։

Վեհափառը ընդունելով հոգեւորականութեանը և Նոր Պայազիտ քաղաքացւոց ողջոյններն ու ճառերը, տարածած գորգերի վերայից անցնելով մտաւ շինութեան ներսը։ Ամբոխը դրան և լուսամուտների առաջը չոքած բարձրաձայն օրհնութիւն էր խնդրում, և Վեհափառ Տէրը ջերմագին սրտիւ օրհնեց ամենքին։ Ե. զիդների ցեղից երեք քրդեր ծունկ չոքեցան, սողալով մօտեցան Վեհափառի գարշապարին և սկսան համբուրել նորա ոտներն ու ձեռքերը։ Վեհափառը շատ մխիթարական խօսքեր ասաց նոցա . . . ։ Գիշերը սկսաւ լուսավառութիւն. օդը շատ հանդարտ էր. լիճը հայելու տեսք ունէր. իսկ վառուող լապտերներն ու հրավառութիւնը տալիս էին գիշերուան երեւակայական, բանաստեղծական կերպարանք. տեսարանը հրաշալի էր։

Նոր Պայազիտցիները պատրաստել էին ճոխ ընթրիք և փառաւոր հիւրասիրութիւն արին։

Սեպտ. 14ին առաւօտեան 8 ժամին Վեհափառը Ելենովկայից դուրս գնաց։ Սեւանայ լիճը գեղեցիկ էր, օդը պարզ էր և տաք. ուստի և գնացքը լճի ափին փառաւոր էր և զուարճալի։ Սեւանայ վանքի հանդէպ լճի ափին շարուել էին վանքի միաբանութիւնը. Վեհափառը մօտեցաւ միաբանութեան, հարց ու փորձ արաւ ամենքին, խրատներ տուաւ նոցա, յորդորելով ամենքին իրանց ուխտին հաւատարիմ մնալ և սրբութեամբ կատարել վանքի կանոնները, և հնազանդ վանահօրն։ Այս անցաւ գնացքը յառաջ և Վեհափառը Զիբուխլի գիւղի հայ ժողովրդոց օրհնելուց յետոյ անցաւ Սիմեոնովկայ կայարանը, որից ոչ հեռու Վեհափառին դիմաւորեց Ղազախու գաւառակի ճանապարհների գլխաւոր վերակացու Լազարեանցը իւր հեծեալներով։ Սիմենովկա իջեւանն